ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎԱՅԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ «ՀՀ ՔԾԽ ԳՀԱՇՁԲ-18/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **12.04.2018թ.**

Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմեն Ավետիսյան
Հանձնաժողովի անդամներ՝	
ԳՊ/ ԳԱ	Միքայել Եղիազարյան
ԳՊ/ԳԱ	Կարեն Բարսեղյան
ԳՊ/ԲԱ	Հասմիկ Սիմոնյան
ԳՊ/ԲԱ	Ցողիկ Ասատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Մագդա Կարապետյան

«ՀՀ ՔԾԽ ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման *ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.*

1. *Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.*

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն <<Բագրիգ>> ՍՊԸ-ն «ՀՀ ՔԾԽ ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն (36 196 ՀՀ դրամ): Վերոնշյալ եզրակացության ստացման օրը <<Բագրիգ>> ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստով ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետով սահմանված տեղեկատվությունը: Նշված ժամանակահատվածում <<Բագրիգ>> ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելու օրվա դրությամբ գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունից տարբերվող այլ տեղեկատվություն: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց <<Բագրիգ>> ՍՊԸ-ի «ՀՀ ՔԾԽ ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտը մերժել, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից <<Միսմա>> ՍՊԸ-ին:

2. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ *ենթակետի համաձայն* էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց

պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակելու մասին.

(Արմեն Ավետիսյան)

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետի համաձայն, «*ՀՀ ՔԾԽ ԳՀԱՇՁԲ-18/1*» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի վարչական շենքում, ք. Երևան, Տերյան 89, սենյակ 2 հասցեում:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Արմեն Ավետիսյան	.....	Տնտեսական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Միքայել Եղիազարյան	.....	Իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Կարեն Բարսեղյան	.....	Իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Հասմիկ Սիմոնյան	.....	Հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Ցողիկ Ասատրյան	.....	Իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Մագդա Կարապետյան	.....	Տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)- ՊՊԳՀԱ